ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N3101 - Ա **22 ապրիլի 2009թ.**

ՎԱՐՇԱՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ. 22 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՈՀԱՐԻԿ ՊԱՐՈՒՅՐԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԱՐՄԱՆ ՌԱՖԻԿԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԵՂԻՍԱԲԵԹ ԱԶԱՐԻԿԻ ՄԱԼԱՔՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Գոհարիկ Պարույրի Հակոբյանի (ծնված 05.04.1937թ.), Արման Ռաֆիկի Հակոբյանի (ծնված 18.04.1975թ.), Եղիսաբեթ Ազարիկի Մալաքյանի (ծնված 04.07.1956թ.) դիմումը: Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Վարշավյան փողոցի հ.22 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 743.53քմ, որից 650քմ մակերեսով հողամասը Գոհարիկ Պարույրի Հակոբյանին, Արման Ռաֆիկի Հակոբյանին, Եղիսաբեթ Ազարիկի Մալաքյանին սեփականության իրավունքով պատկանող հողամաս է (վկայական տրված 11.03.1993թ. հ.1976): Օրինական հողամասին կից օգտագործվող 93.53քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1988 թվականը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 01.04.2009թ. հ.20/2-Ե/161 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 18.03.2009թ. հ.1912 եզրակացությունը, համաձայն որի Վարշավյան փողոցի հ.22 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Վարշավյան փողոցի հ.22 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Գոհարիկ Պարույրի Հակոբյանի, Արման Ռաֆիկի Հակոբյանի, Եղիսաբեթ Ազարիկի Մալաքյանի հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 650քմ մակերեսով հողամասին կից 93.53քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 93.53քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Զեյթուն 6-րդ փողոցի հ.22 և 24 հասցեի բնակելի տներին տրամադրել հասցե՝ <<Վարշավյան փողոցի հ.22 տուն>>։

5. Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Գոհարիկ Պարույրի Հակոբյանի, Արման Ռաֆիկի Հակոբյանի, Եղիսաբեթ Ազարիկի Մալաքյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ